

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՔԱՐՈԶ

Խնդրեա վխաղաղութիւն և երթ վեհետ նոյա»:
«Խոտորեա ի չարէ և արա զբարի,

(ՍՂՄ. ԼԳ 15)

Սիրելի բարեպաշտ հայորդիներ,

Քառասնօրյա պահոց շրջանով սկսվեց մարդկային հոգու փրկության ճանապարհը: Յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա այս օրերին անկեղծ ցանկությունն ունի իր կյանքի առաջնորդող գաղափարը դարձնել Քրիստոսի այս լույս պատգամը. «Հեռու մնա չարից և բարին գործիր, փնտրիր խաղաղությունը և գնա նրա ետևից»:

Քառասնօրյա պահոց վերջին հանգրվանին, կարծում եմ, պատշաճ է ինքնաքննադատ մոտեցմամբ հարց տալ մեզ՝ կարողացա՞նք արդյոք ապահովել մեր հոգու անդորրը, Քրիստոսով վերագտնել ներքին խաղաղությունը, արդյո՞ք մեր մտածումների և զգացումների խաչմերուկներում «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սղմ. ՁԵ 10): Մարդկային հոգու խաղաղության մասին Վեհափառ Հայրապետը գրում է. «... մանավանդ հոգու խաղաղությունն է, որ հանդիսանում է հոգեբանական հիմքը բոլոր տեսակի խաղաղ դրրսևորումների մարդկային կյանքում: Մարդ նախ պիտի ունենա ներքին խաղաղ հոգեվիճակ, որպեսզի կարողանա խաղաղ ու հավասարակշռված մնալ իր զգացումներով, իր մտածումներով և իր ձեռաց գործերով: Այսպիսի հոգեվիճակով է միայն, որ նա կկարողանա խաղաղություն ներշնչել ու տարածել իր ընտանեկան հարկի տակ, իր ընկերային հարաբերությանց մեջ, իր եկեղեցական համայնքային կյանքում, իր աշխատանքի վայրում, իր քաղաքացիական պարտականությանց ճանապարհին[1]: Հիրավի, անհատի հոգեկան խաղաղությամբ և դրանից ծընվող բարի գործերով է պայմանավորված աշխարհի խաղաղությունը:

Մենք բոլորս քաջ գիտենք, սիրելի հավատացյալներ, որ այսօրվա մեր աշխարհում, մարդկային մեր առօրյա կյանքում եղբայրների հաշտ ու խաղաղ համակեցության՝ «Զի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սմղ. ՃԼԳ 1) սաղմոսերգությունից առավել ուժգին հնչում է «ուր է Աբել եղբայր քո» երկյուղալդու ձայնն Աստուծո: Հրեշտակաց գնդերի քաղցրահունչ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» կենսախորհուրդ ավետիս-օրհներգության փոխարեն, երկնքից լսելի է կործանարար աստղային պատերազմի սահմռկեցուցիչ և ահաբեկող սպառնալիքը: Արդարև վտանգված է երկնքի ու երկրի խաղաղությունը:

Մարդկային մութ ու խավար գործերը, անիրավություններն ու անարդարությունները,

[1] «Էջմիածին» ամսագիր, 1986 թ., հմր. Ա, էջ 4:

նրանց բակմապիսի մեղանչումները Աստուծո դեմ, որպես փուշ ու տատասկ փրկության նեղանցուկ ճանապարհին՝ հաճախ խոցել և խոցում են երկրի վրա երկնային արքայության արահետը բացող արդար ու անմեղ մարդկանց, ոմանց մարմնական վերքեր միայն հասցնելով, ոմանց էլ մահ պատճառելով: Այսպես է կազմվել երկիրը երկընքին կամրջող սանդուղքը սրբոց դասի, այսպես են հավերժացել «իմացյալ մահով» մարտի դաշտում ընկած հայրենյաց խաղաղարար հերոս զավակները:

Իրողությանց այս լույսի տակ մեր օրերում առավել հրամայական է դառնում անշեղորեն ու հաստատուն հավատքով կյանքի կոչել Քրիստոսի խաղաղության Ավետարանը: «Չգիտեմ կհաջողվի՞ այդ մեկ՝ եկեղեցիներիս, մեկ՝ քրիստոնյաներիս: Պիտի կարողանա՞նք քանդել միջնորմը թշնամությունների, պիտի կարողանա՞նք համոզել ժողովուրդներին և պետական ղեկավարներին, որ բոլոր մարդիկ միևնույն Աստուծո որդիներն են, որ եղբայրներ են միևնույն տան մեջ բնակվող, միևնույն առօրյա դժվարություններով, միևնույն երազանքներով, միևնույն ճակատագրով»[2] իրավամբ երկմտում է ազգիս հովվապետ Վազգեն Ա կաթողիկոսը: Քանզի, Քրիստոսի խաղաղությունը ներկա մեր կյանքի, մեր աշխարհի խաղաղությունը չէ միայն՝ հիմնված վախի զգացման և բիրտ ուժի վրա: Այսօր աշխարհի խաղաղության ետևում արգելափակված է պատերազմը, նման վանդակում արգելափակված վայրի գազանի, որի վնասարարությունից մարդիկ ցերծ են այնքան ժամանակ՝ մինչ գազանը վանդակում է: Եվ խիստ մտահոգ վանդակի ամրությամբ և ապահովությամբ՝ մարդիկ ապրում են մնայուն վախի մեջ, թե չլինի հանկարծ մի պատահական սխալով գազանն այդ դուրս պրծնի և իր ավերը գործի աշխարհում: Սակայն Քրիստոս վստահեցնում է մեզ. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս, ձեր սրտերը թող չխռովվեն և չվախենաք» (Հովհ. ԺԴ 27):

Քրիստոսի խաղաղությունը, սիրելի հավատացյալներ, սիրո, եղբայրության և արդարության խաղաղություն է, ժայռերի վրա հիմնված ավետարանական տան պես հաստատուն, մնայուն ու հավերժական: Որպես քրիստոնյաներ, Քրիստոսի անունը կրողներ, մեր կրոնական ու բարոյական պարտքն է հետևել Քրիստոսի կյանքին, գործին ու նրա Ավետարանին: Չի կարելի լինել քրիստոնյա ու չխարազանել չարն ու անարդարը, չդատապարտել բիրտ ու բռնի ուժը, մահափյուռ պատերազմը, որոնք «ոճիր են Աստծո դեմ, երկնքի դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկային վեհ ու ազնիվ երազանքների դեմ»[3]: Եվ վերջապես՝ գիտության ու տեխնիկայի հսկայաքայլ նվաճումներով երկրագնդի սեփականատերը դարձած մարդուս համար այսօր մեծագույն հայրենասիրությունը խաղաղասիրությունն է: Այս ոգով ու այս գիտակցությամբ է, որ խաղաղության լույս պատվիրանները, որպես մարդասիրական վեհ գաղափարներ, հնչեցին մեր երկրի կառավարության կողմից Ժնևյան բարձր մակարդակի հանդիպման ժամանակ և վերջին համագումարում:

Սիրելի հավատացյալներ, եկեք աղոթենք առ բարձրյալն Աստված, որ «խաղաղության իշխանը»՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, անդորրություն ու ապահովություն պարգևի ալեկոծված ու ահաբեկված մեր աշխարհին, առաջնորդելով մեզ դեպի նավահանգիստը բարության, սիրո, արդարության ու խաղաղության: Հայցենք նաև, որ շնորհաբաշխ Սուրբ Հոգու այս պարգևները իբրև երկնքից թափվող մանանա իջնեն մարդկանց հոգիներին, որպեսզի համայն մարդկությունը «հեռու մնա չարից, գործի բարին, փնտրի խաղաղությունը և գնա նրա ետևից» այժմ և միշտ և հավիտյանս, ամեն:

[2] «Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց», գիրք չորրորդ, էջ 187:

[3] «Էջմիածին», 1969 թ., Ժ—ԺԱ, էջ 40: